ՀԱՅՔ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՍՈՒԲՅԵԿՏ



«Հայք» Քաղաքակրթական Սուբյեկտ

Հ Ռ Չ Ա Կ Ա Գ Ի Ր

- Չհանդուրժելով հակաքաղաքակրթական աշխարհակարգը, որն այլևս գոյաբանական արհավիրք է և վտանգում է մարդկության գոյությունն իսկ.
- Հաշվի առնելով, մասնավորապես, հայ ժողովրդի և նրա վտանգված պետականության տագնապալի իրողությունը.
- Թելադրված հնագույն արարչական քաղաքակրթությունների և նրա ակունքներից եկող Հայ ժողովրդի պատմական առաքելությամբ.

Հռչակում ենք ՀԱՅՔ - ի մուտքը Աշխարհ.

– Որպես՝ քաղաքակրթական անվտանգության հանձնառու, նոր, մարդահենք քաղաքակրթության մունետիկ ու սպասարկու.

– Որպես՝ համընդհանուր արդարությանը հետամուտ, աշխահասփյուռ հայ ժողովրդին ու նրա անբեկանելի պահանջատիրությունը ներկայացնող իրական ՍՈՒԲՅԵԿՏ ու կառավարման նորովի համակարգ…

– Որպես՝ Տիեզերական Ներդաշնակության թելադրանքով պայմանավորված Ժողովուրդների միջև արարչագործ համագործակցություն ապահովող քաղաքակրթական հաղորդակցիչ.

Պահը ճակատագրական լինելով, նաև՝ բացառիկ է, պատմական…

ՀԱՅՔ–ը ստանձնելով քաղաքակրթական անցում նախանշող մեծագույն պատասխանատվությունը, կարևորում է արդեն իսկ գործող ազգանպաստ հայքյան կառույցների ու անհատների ջանքերի համատեղմամբ, այս իսկ պահից այն կյանքի կոչելու հրատապությունը։

«Հայք» Քաղաքակրթական Սուբյեկտը ներկայացնում է

«Հայք»-ը՝ որպես հայ ազգի քաղաքակրթական ինքնատիպությունն արտահայտող սուբյեկտ, հռչակում է իր արարչական կենսագործունեության վերամեկնարկումը: Հայք-ը վերադառնում է աստվածապարգև իր առաքելությանը և արդար պահանջատիրությամբ տեր կանգնում իր արարչաստեղծ քաղաքակրթական արեալին՝ Պատմական Հայքին, Հայկական Լեռնաշխարհին, Բնօրրան-Հայրենիքին:

Հայքի վերադարձը հստակ ուղերձ է, որ այն կրկին ստանձնում է իր բացառիկ դերը արարչական օրենքներով քաղաքակրթական կրակի պահպանման, տարածման և արարող մյուս քաղաքակրթությունների հետ նախասահմանված արդար ու ներդաշնակ աշխարհի ձևավորման գործում:

Իր արարչական առաքելության գիտակցմամբ Հայքի վերադարձը հստակ ուղերձ է բոլորին.

Առաջինը՝ Հայքի վերադարձը ամենից առաջ ուղղված է աշխարհասփյուռ բովանդակ հայությանը, որ «Հայք» քաղաքակրթական սուբյեկտը այն համահայկական Համակարգը, հայահավաք Հայրենիքն է, որն ամբողջանում է Հայկի զարմերի վերադարձով սեփական արարչապարգև առաքելությանը:

Երկրորդ՝ Մերձավոր Արևելքի ավտոխտոն (բնիկ) ժողովուրդներին, նրանց հետ միասին դիմակայելու և չեզոքացնելու տարածաշրջանում հաստատված մակաբույծ հակաքաղաքակրթությունների Ցեղասպան ու մշակութասպան քաղաքականությունը և կրկին կյանքի կոչելու Մերձավոր Արևելքի բնիկ ժողովուրդների համար արդարության հիմքով Ընդհանուր Տուն կառուցելու գաղափարը:

Երրորդ՝ Հայքն իր նախասահմանված առաքելության գիտակցմամբ կրկին ստանձնում է տարբեր կրոնների, ժողովուրդների ու քաղաքակրթությունների միջև համերաշխ երկխոսությունը, հավասարակշռությունը, ներդաշնակությունն ու ստեղծարար համագործակցությունն ապահովող քաղաքակրթական կոմունիկատիվի իր բացառիկ դերը:

Չորրորդ՝ Հայքը վերադառնում է նաև հին քաղաքակրթությունների մեծ ընտանիք և պատրաստակամություն հայտնում մասնակցելու, ձևավորելու, կենսագործելու արդար ու ներդաշնակ համակեցություն ու հասարակարգ արարելու միջկոնտինենտալ կենսաքաղաքականություն:

Եվ վերջապես ու հիմնավորապես՝ Հայքի վերադարձը հստակ ուղերձ է բոլոր աշխարհներին, ժողովուրդներին ու քաղաքակրթություններին, որ ինչպես մեր նախահայր Հայկը, այնպես էլ նրա ժառանգները պատրաստ են կրկին կործանելու բաբելոնյան ժամանակակից աշտարակաշինությունը և իրենց ողջ ջանքերը ներդնել արարչական օրենքներին համապատասխան Արդար Աշխարհակարգ արարելու միասնական սուրբ ու նվիրական գործին:

«Հայք» քաղաքակրթական սուբյեկտի անունից գործող կառույցները իրենց բովանդակ ներուժն այսուհետ ծառայեցնելու են այս ամենի լիարժեք իրացմանը և

խորապես գիտակցում են, որ անհրաժեշտ նախապայմանը՝ ՀԱՅՔ պետականության վերականգնումն է՝ իր բոլոր աշխարհների և սուբյեկտների ամբողջականացման և սեփական առաքելության հստակ ամրագրման շնորհիվ։

Հայքը եղել է ժամանակների սկզբում, կլինի ժամանակների վերջում և դրանից հետո՝ ընդմիշտ ու հավերժ. . .

«Հայք»-ի կենսագործող կառույցները։
«Հայք»-ի Ամբողջական Պետականության վերականգնման կենտրոն։

Հայկական քաղաքակրթական տարածքում Հայը անհիշելի ժամանակներից կայացրել ու արարել է սեփական պետականությունը։

Հայոց պետականությունն իր գոյության գրեթե բոլոր ժամանակներում ոչ միայն կազմակերպել է ներքին համակեցական կյանքը, այլև բացառիկ դեր է ունեցել տարածաշրջանի անվտանագության համակարգում՝ լինելով անվտանգային ճարտարապետման մեջ այն բացառիկ աղյուսը, որը հավասարակշռել ու ներդաշնակել է բնիկ ժողովուրդների քաղաքակրթական արդար շահերը։ Հայն իր առաքելության այս բացառիկ գործառույթը կարողացել է լիարժեք իրացնել միայն նրա շնորհիվ, որ հայկական հասարակական կյանքի կազմակերպման հիմքը եղել է արարչական ազատությունը, արդարությունն ու առաքինությունը։ Այո՛, միայն ազատության, արդարության ու առաքինության հիմքով էր, որ հայերը սեփական պետականության բոլոր փուլերում խուսափեցին ստրկատիրությունից ու մարդկանց գերշահագործումից։ Հայքը իր պետականության շնորհիվ միշտ հանդիսացել է արարչական ազատությամբ, արդարությամբ ու առաքինությամբ ապրող, արարող ու արտահանող քաղաքակրթական կենտրոն, այդ քաղաքակրթական կրակի դարբնոց ու փոխանցման կամուրջ։

Սակայն, այսօր Հայքը զրկված է լիարժեք արարելու հնարավորությունից, քանի որ իր հայրենի կենսատարածքի ինը տասներորդ մասը բռնազավթված է մակաբույծ հակաքաղաքակրթությունների կողմից, որոնք միայն ցեղասպանության միջոցով կարողացան Հային հայրենազրկել և կենսանվազեցնել արարող կենսաէներգիան։ Եվ այսօր գրեթե հանգել է Արդարության քաղաքակրթական կրակը, որի վերջնական մարումը դարձել է առավել քան իրատեսական, քանի որ մակաբույծները անթաքույց, արդեն հրապարակավ իրականացնում են ցեղասպանության վերջին փուլը՝ իրենց ավերող ողջ էներգիան ուղղելով սեփական հայրենիքում ծվարած հայ ազգի վերջին փշրանքներին՝ սպառնալով վերացնել պետականության վերջին բեկորները՝ հայաթափելով Արցախի Հանրապետությունը և ռազմական նկրտումներ ցուցաբերելով Հայաստանի Հանրապետության հանդեպ, որն այսօր իր գոյությունն է ապահովում սեփական կենսատարածքի ընդամենը մեկ տասներորդի վրա։

Պետք է փաստել, որ այսօր սեփական պետականությունում իշխանությունը նույնպես նվաճված է հակահամակարգի կողմից և այն, ինչ տեղի է ունենում Հայաստանի քաղաքական ու հասարակական դաշտում, բացարձակ կապ չունի Հայի ու Հայքի հետ։

«Հայք» քաղաքակրթական սուբյեկտն իր վերադարձով հռչակում է իր բնական իրավունքը՝ տեր կանգնելու սեփական կենսատարածքին՝ Հայրենիքին։

Արարչական այս առաքելության լիարժեք իրացման համար «Հայք» քաղաքակրթական սուբյեկտի անունից կենսագործում է «Հայք»-ի Ամբողջական Պետականության Վերականգնման Կենտրոնը։

Կենտրոնը արդեն լիարժեք գործող կառույց է, որի գործունեության նպատակ հռչակվել է.

Ամբողջականացնել Հայքի աշխարհներն ու սուբյեկտները և կերտել մեկ ամբողջական քաղաքական սուբյեկտ՝ ՀԱՅՔ պետությունը, որը և՛ ներքին համակեցական կյանքը, և՛ արտաքին հարաբերությունները բացառապես կայացնելու է սեփական առաքելությանը համապատասխան՝ տեր կանգնելով բնական կենսատարածքին՝ սեփական բնօրրան Հայրենիքին և արարչակամ արդարության ու ազատության կրակն արարելու ու արտահանելու իր սրբազան գործառույթին։

«Հայք»-ի ամբողջական պետականության վերականգնման կենտրոնն իր գործունեությունն այսօր ծավալում է երեք հարթություններում.

Առաջինը՝ Հայաստանի Հանրապետության վերաճային կերպափոխումն է Հայք ազգային պետության։

Երկրորդ հարթությունը վերաբերում է իր ողջ քաղաքակրթական արեալում՝ Հայք ազգապետության հիմնադրմանը՝ տեր կանգնելով Հայքի բոլոր աշխարհներին։ Այս ուղղությամբ արդեն հստակ աշխատանքներ են տարվում Հայքի տարբեր աշխարհների անունից գործող սուբյեկտների հետ։ Դրանք են Արևմտյան Հայաստանի կառավարությունը, Կիլիկիայի թագի վերականգնման կառույցը և արդեն իսկ վերականգնման փուլում գտնվող Արցախ աշխարհի քաղաքական սուբյեկտը՝ իր տարբեր կառույցներով։ Բոլոր այս կառույցները գործում են բացառապես բնական իրավունքի հիմքով և նրանց ամբողջացումը մեկ պետության մեջ հնարավոր է դարձնելու՝ Հայք ազգապետության վերականգնումն ու կենսագործումը սեփական կենսատարածքում։

Երրորդ հարթությունն ունի արդեն համամոլորակային ընդգրկում՝ ողջ հայկականության մասշտաբով։ Այս դեպքում պետք է կայացնել Հայք Ազգ-Պետություն համաշխարհային ցանցային սուբյեկտը, որը հնարավորություն է տալու աշխարհաշեն հայերին վերադառնալ սեփական առաքելությանը և դրա հիմքով ձևավորել աշխարհարար ամբողջական ցանցային կենսագործուն համակարգ։

«Հայք» քաղաքակրթական սուբյեկտի անունից գործող ամբողջական պետականության վերականգնման կենտրոնը ձեռնամուխ է լինելու նաև տարածաշրջանի բնիկ ժողովուրդների կորցված պետականության վերկանգնման արդար գործին։ Հատկապես՝ տարածաշրջանը ազատագրելով մակաբուծային համակարգերից և նրանց վարած ցեղասպան ու մշակութասպան ավերիչ քաղաքականությունից՝ խաղաղության ու համերաշխության, արդար ու ներդաշնակ համագոյակցության սկզբունքներով ձևավորել <u>Արևմտյան Մերձկասպյան Դաշնային Պետություն</u>։

Հայքի վերադարձը արդեն իսկ նշանակում է տարածաշրջանի ողջ քաղաքակրթական ժառանգության պահպանում և հակաքաղաքակրթությունների կողմից իրականացվող մշակութասպանության ու ցեղասպանության չեզոքացում, հետևանքների վերացում, արդարության վերականգնում, ներդաշնակ համագոյակցության համակարգերի ձևավորում։

Հայքը եղել է ժամանակների սկզբում, կլինի ժամանակների վերջում և դրանից հետո՝ ընդմիշտ ու հավերժ...

«Հայք» Քաղաքակրթական Սուբյեկտը ներկայացնում է։ «Հայք»-ի կենսագործող կառույցները։ «Հայք»-ի Մշակութային Օմբուդսմենի (քաղաքակրթական ժառանգության արժեպաշտպանի) Ինստիտուտ։

Մեր տարածաշրջանը պատմության վաղնջական ժամանակներից հանդիսացել է քաղաքակրթական հարուստ ժառանգություն արարող ու արտահանող համաշխարհային կարևորագույն կենտրոն։ Քաղաքակրթական այդ ժառանգությունը սերնդեսերունդ փոխանցվելով ու հարստացվելով ոչ միայն ապահովել է բնիկ ժողովուրդների արդար ու խաղաղ գոյակցությանը, այլև հաստատապես նպաստել է ողջ մարդկության բնականոն էվոլյուցիային։ Այդպիսին է դարեր շարունակ եղել մեր քաղաքակրթական խառնարանի բացառիկ գործառույթը։ Սակայն, մեր տարածաշրջան թափանցած մակաբույծ տարրերը ժամանակի ընթացքում կարողացել են այստեղ հաստատվել բացառապես բնիկ ժողովուրդների քաղաքակրթական ժառանգության յուրացման հաշվին։ Հարյուրավոր տարիների ընթացքում թալանելով, ցեղասպանելով բնիկ ժողովուրդներին՝ այսօր իսկ հասել են մշակութասպանության վերջին փուլին, երբ փորձ է կատարվում վերջնականապես ջնջել պատմության հետքերը և բնիկ ժողովուրդներին վերջնականապես զրկել սեփական ինքնությունից։

«Հայք» քաղաքակրթական սուբյեկտն իր վերադարձով հռչակում է իր բացարձակ իրավունքը տեր կանգնել սեփական քաղաքակրթական ժառանգությանը և հանուն արդարության վերականգնման օժանդակել այլոց էլ իրացնելու իրենց մշակութային արժեպաշտպանության իրավունքները։ Դրա համար «Հայք»-ի անունից գործունեություն է ծավալում «Հայք»-ի Մշակութային Օմբուդսմենի Ինստիտուտը, որը նպատակ է հռչակել դառնալ քաղաքակրթական ժառանգությունների արժեպաշտպանը։

«Հայք»-ի մշակութային օմբուդսմենն այսօր իսկ լիարժեք գործող կառույց է, որը հիմնադրվել է Արցախում, սակայն Արցախի հերթական ցեղասպանության և հայենազրկման հետևանքով իր հույժ պահանջված գործունեությունը վերականգնել և շարունակում է Հայաստանի Հանրապետությունում։

«Հայք»-ի մշակութային օմբուդսմենի կողմից հրապարակվել են բազմաթիվ անհերքելի փաստեր, Արևմտյան Մերձկասպիայում հաստատված մակաբույծների կողմից հայկական քաղաքակրթական ժառանգության ոչնչացման ու յուրացման

ուղղությամբ: Այդ դեպքերը ոչ միայն բազմաթիվ են, այլև հստակ համակարգված ու նպատակաուղղված են, ինչը հաստատում է մակաբույծ տարրերի մշակութասպան քաղաքականության մանրամասն պլանավորման ու իրականացման հանգամանքը:

«Հայք»-ի մշակութային օմբուդսմենը չի սահմանափակվելու միայն Արցախի մշակութային ժառանգության հիմնահարցերով: Կենտրոնը որպես նպատակ հռչակել է ողջ Հայքի կենսատարածքի քաղաքակրթական ժառանգության պահպանումը՝ տարածաժամանակային դրսևորման ամբողջության մեջ:

Մշակութային օմբուդսմենի ինստիտուտը, որպես «Հայք» քաղաքակրթական սուբյեկտի կառույց, իր ներդրումն է ունենալու մակաբույծ հակաքաղաքակրթություններից տարածաշրջանի բնիկ ժողովուրդների քաղաքակրթական ժառանգության պահպանման արդար գործում:

Ինստիտուտի գործունեության չափելի արդյունքներից են հանդիսանալու մշակութային յուրացման կոնկրետ դեպքերի արձանագրումը և իրավական պատժելի մեխանիզմների ստեղծումն ու կիրառումը:

Բացի վերը թվարկված կոնկրետ գործառույթներից, «Հայք»-ի մշակութային օմբուդսմենն ամրագրել է նաև իր գործունեության երեք կարևոր առաքելություն.

- Նպաստել Ռերիխի պակտի ամրագրմանն ու միջազգայնացմանը,
- Իր ջանքերը ներդնել «Շուշի» քաղաքակրթական կենտրոնի կայացման համընդհանուր գործին,
- Հաստատուն քայլեր ձեռնարկել Հայկական քաղաքակրթական Տրիբունալի լիարժեք կայացման ու կենսագործման համար:

Հայքը եղել է ժամանակների սկզբում, կլինի ժամանակների վերջում և դրանից հետո՝ ընդմիշտ ու հավերժ...

«Հայք» Քաղաքակրթական Սուբյեկտը ներկայացնում է։
«Հայք»-ի կենսագործող կառույցները։
«Հայք»-ի Քաղաքակրթական Երկխոսության Կենտրոն։

«Հայք» քաղաքակրթական սուբյեկտն իր առաքելական կենսագործունեության վերամեկնարկումով միաժամանակ հայտ է ներկայացնում մասնակցելու Արդար Աշխարհակարգի կայացման գործին՝ որպես լիարժեք սուբյեկտ և պատասխանատու դերակատար։ Պատասխանատու դերակատար, քանի որ Հայքն իր էությամբ և ձևով, հայկականության համար վերադարձ է ապահովում դեպի սեփական կենսամիջավայր, դեպի Արարչական արժեհամակարգ, որտեղ աներկբա է նախասահմանված առաքելության գիտակցումը և իրացումը։

«Հայք» քաղաքակրթական սուբյեկտը, ելնելով Հայ տեսակի քաղաքակրթական-արարչական առաքելությունից, իր ողջ ռեսուրսներով հետամուտ է լինելու.

- Համամարդկային քաղաքակրթության բազմազանության պահպանմամբ՝ Արարչակրթական նոր կենսափուլի ձևավորմանն ու զարգացմանը,
- Մարդկության էության վերաճի ապահովմանը։ Հոգևոր Էակի ձևավորմամբ՝ մարդու արարող տեսակի լիարժեք կենսագործունեությանը,
- Ապագա Աշխարհակարգի հաստատման հիմքում Արարչական սկզբունքի՝ Արդարության ներդրմանը,
- Քաղաքակրթական հաղորդակցիչի իր գործառույթի իրացմանը՝ ներդաշնակ ու ստեղծարար երկխոսության ու համագործակցության կայացմանը
- Հյուսիս-Հարավ-Արևելք-Արմուտք քաղաքակրթական կոդերի ներդաշնակմանը, դրանց աղեղների համադրմամբ՝ քաղաքակրթական բնական Խաչի հավաքմանը։

Դրա համար «Հայք»-ի անունից գործունեություն է ծավալում Քաղաքակրթական Երկխոսության Կենտրոնը, որի գործունեությամբ կսահմանվի «Հայք»-ի հստակ արժեքայնությունն ու նշանակությունը, դերակատարությունն ու առաքելությունը՝ Ապագա Աշխարհակարգի ձևավորման բոլոր հարթություններում՝ երկրագնդի ներկա աշխարհաքաղաքական կառուցվածքի բոլոր՝ մակրո, մեզո և միկրո մակարդակներում։

Ըստ այդմ, Հայկական քաղաքակրթական հայտի բովանդակությունը կարելի է արտահայտել եռամասշտաբ դրսևորմամբ՝

- Միկրո մակարդակ – Ապագա Հասարակարգի էության և բնույթին համապատասխան Պետականակարգության Նոր մոդելի ներդրում։

Նոր տիպի Պետականակարգությունները, ինչպիսին պետք է լինի Հայքի քաղաքական դրսևորումը, դառնալու են և՛ դիմակայության քաղաքակրթական դարպասներ, և՛ քաղաքակրթական ժառանգականության փոխանցման, և՛ էներգիայի կուտակման քաղաքակրթական կամուրջներ։

«Հայք» քաղաքակրթական սուբյեկտի կողմից նման պետության ձևավորման հայտը բխում է մեր տեսակի կենսական անհրաժեշտությունից և միաժամանակ հիմք կարող է դառնալ նոր Աշխարհակարգի գլխավոր սուբյեկտների ձևավորման համար։ Այսինքն՝ ներդրվում է նոր տիպի սուվերեն պետականակարգությունների մոդել, որտեղ բացառվում է հասարակական կյանքի կազմակերպման ներկայիս հնացած ու մաշված շաբլոնների պարտադրանքը։ Այդ հանգամանքն ինքնին ենթադրում է քաղաքակրթական հստակ պատասխանատվության ստանձնում և բնական դաշնակիցների հետ նպատակային լիարժեք համագործակցություն։

Հետևաբար, Արարչակրթական հիմքով Հայոց Ազգային Արդարապետության հայտը հստակ ուղերձ է բոլոր դաշնակիցներին, որոնց հետ ստեղծարար համագործակցությունը դառնալու է «Հայք»-ի Քաղաքակրթական Երկխոսության Կենտրոնի գործունեության առաջնային բովանդակությունը։

- Մեզո մակարդակում Արարչակրթական տարածաշրջանային անվտանգության գոտիների ձևավորում։

Մեզո մակարդակում, անվտանգության հայեցակարգը պետք է կառուցվի տարածաշրջանների բնիկ ժողովուրդների սոցիալ-բնական կենսագործունեությունն ապահովող անվտանգային առաջնահերթությամբ։ Այս ասպեկտում առաջնահերթ նշանակություն է ստանում տարածաշրջանի եկվոր (էությամբ դեռ քոչվոր) էթնիկ խմբերի էքսպանսիոն հավակնությունների չեզոքացումը։ Հետևաբար, Ապագա Աշխարհակարգի հիմքը պետք է կազմեն քաղաքակրթական (Արարչակրթական) անվտանգության տարածաշրջանային գոտիները, որոնք և՛ պետք է դիմակայեն քանդող (ավերող, սպառող, կլանող) քաղաքակրթությունների (հակաքաղաքակրթությունների) մարտահրավերներին, և՛ պետք է ապահովեն քաղաքակրթական ժառանգականության, արժեհամակարգերի ու էներգիայի փոխանակում՝ հանուն քաղաքակրթական արժենպատակային անցման։ Ըստ այդմ, տարածաշրջանային անվտանգության քաղաքակրթական արեալներն Ապագա Աշխարհակարգում կատարելու են քաղաքակրթական հաղորդակցիչի դեր և ապահովելու են համամարդկային քաղաքակրթական բազմազանության լիարժեք ու ներդաշնակ կենսազարգացումն ամբողջ երկրագնդով։

Երկրագնդի աշխարհաքաղաքական ապագա կառուցվածքում, նմանատիպ՝ տարածաշրջանային անվտանգության արեալի կարգավիճակի կարող է և պետք է հավակնի Մերձավոր Արևելքը, որը հանդես է գալու որպես բնիկ ժողովուրդների <u>Ընդհանուր Տուն</u>։ Ըստ այդմ, ձևավորվելու է անվտանգային այն միջավայրը, որը հնարավորություն է տալու, որպեսզի ավտոխտոն ժողովուրդները լիարժեք կենսագործեն, իսկ դա իր հերթին հնարավորություն կտա քաղաքակրթական հաղորդակցիչի դեր կատարել Նոր Աշխարհակարգի հիմնական բևեռների՝ պայմանական Արևելքի (Չինաստան, Հնդկաստան), Արևմուտքի (Արևմտյան՝ արիա-քրիստոնեական քաղաքակրթության կոդը պահող շրջանակներ), Հյուսիսի (Ռուսաստան) և Հարավի (Աֆրիկայի ավտոխտոն ժողովուրդներ) միջև։

Հետևաբար, «Մերձավոր Արևելք - Ընդհանուր Տուն» անվտանգային հայեցակարգը՝ որպես աշխարհաքաղաքական ռեալ ծրագիր, լիարժեք ներդաշնակում է և՛ տարածաշրջանի բնիկ ժողովուրդների, և՛ աշխարհաքաղաքական գլխավոր դերակատարների շահերը։

Պատմական պատասխանատվությունից ելնելով՝ «Մերձավոր Արևելք - Ընդհանուր Տուն» անվտանգային հայեցակարգն իրականություն դարձնելու պարտականությունը կրելու են Հայկական, Իրանական և Արաբական պետությունները, որոնք կարող են և պետք է ներդաշնակեն տարածաշրջանի բնիկ ժողովուրդների սոցիալ-բնական կենսագործունեությունը, և՛ պետք է դիմակայեն թյուրքական քանդող-ավերող գործոնին։ Ավելին, քրիստոնեական-մահմեդական աշխարհների առանցքի շուրջ, Մերձավոր Արևելքում կարող են համադրվել Հյուսիսի-Հարավի-Արևելքի-Արևմուտքի քաղաքակրթական վեկտորները։

Ըստ այդմ, աշխարհաքաղաքական գլխավոր ակտորների կողմից Ապագա Աշխարհակարգի կայացման համար անհրաժեշտ հաղորդակցման ուղիների (տրանսպորտային, տեղեկատվական և այլն) նախագծման, ծրագրավորման և ճարտարապետման գործընթացներում Մերձավոր Արևելքի քարտեզագրումը բացառապես պետք է բխի վերոնշյալ իրողություններից, այն է՝ բնիկ ժողովուրդների կենսագործունեության լիարժեք ապահովում և թյուրքական էքսպանսիայի բացառում։

Այսպիսով հստակեցված է «Հայք»-ի Քաղաքակրթական Երկխոսության Կենտրոնի գործունեության հաջորդ հարթությունը՝ «Մերձավոր Արևելք - Ընդհանուր Տուն» անվտանգային ծրագրի իրացում բոլոր պատասխանատու դերակատարների հետ։

«Հայք»-ի Քաղաքակրթական Երկխոսության Կենտրոնի երրորդ հարթությունը վերաբերում է Մակրոմակարդակին, որի վերջնանպատակը՝ Արարչակրթական Արդար Աշխարհակարգի կայացումն է։

Մակրոմակարդակում միջազգային հարաբերությունները, այդ թվում՝ անվտանգության համակարգը պետք է կառուցվի բոլորովին նոր հիմքի վրա, որտեղ առանցքայինը՝ մարդկության զարգացման համար Ազատության և Արդարության միահիմք սկզբունքների անբաժան ու ամբողջական ապահովումն է։

«Հայք»-ը և նրա անունից հանդես եկող Քաղաքակրթական Երկխոսության Կենտրոնը կենսագործելու են հենց այս տրամաբանությամբ, որի լիարժեք իրացման համար կենտրոնին զուգահեռ գործունեություն է ծավալելու «Հայք»-ի Քաղաքակրթական Հաղորդակցողը։

Հայքը եղել է ժամանակների սկզբում, կլինի ժամանակների վերջում և դրանից հետո՝ ընդմիշտ ու հավերժ. . .

«Հայք» քաղաքակրթական սուբյեկտը ներկայացնում է։
«Հայք»-ի կենսագործող կառույցները։
«Հայք»-ի Ցանցային Պետություն համահայկական շարժման կենտրոն։

Հին աշխարհը քանդվում է։ Պատերազմներ, համաճարակներ, ցեղասպանություն։ Հակահամակարգը իր մակաբույծ հակաքաղաքակրթական տարրերի միջոցով անցել է սեփական տիրապետությունը հաստատելու վճռական պայքարի և արդեն հրապարակային ի ցույց է դնում իրենց վերջնանպատակը՝ մարդկության տոտալ ստրկացման հեռանկարը։ Մարդկությանը ճնշող անարդարությունը հասել է իր գագաթնակետին, քանի որ կոտրված է արդարության ողնաշարը՝ հնդարիական քաղաքակրթության ամբողջականությունը։ Այո՛, հնդարիական քաղաքակրթությունը, որը միշտ պայքարել է հանուն արարչական արդարության և վճռական ճակատամարտերում իր միասնականությամբ միշտ կարողացել է քանդել բաբելոնյան աշտարակները, այսօր կրկին կանգնած է գոյաբանական ճակատամարտի առաջ։

«Հայք» քաղաքակրթական սուբյեկտի վերադարձը հաստատում է իր վճռականությունը դառնալու մասը այն նվիրական պայքարի, որն ուղղված է համընդհանուր արդարության վերականգնմանը, որում իր մեծագույն ու անգնահատելի դերակատարումը պետք է ունենա հնդարիական քաղաքակրթության միասնական ճակատի ձևավորումը։

Արարչական այս առաքելության լիարժեք իրացման համար «Հայք» քաղաքակրթական սուբյեկտի անունից կենսագործում է Ցանցային Պետություն կենտրոնը։

«Հայք»-ի Ցանցային Պետությունը այսօր արդեն ներկայացված է՝ որպես համաշխարհային հայությանը միավորող համահայկական շարժում, որի նպատակը ազատ, միացյալ, ինքնիշխան, բարեշնորհ ու ամբողջական Հայքի կառուցումն է և դեպի Արդար ու Ներդաշնակ աշխարհ տանող քաղաքակրթական հարթ անցման ապահովումն է։

«Հայք»-ի Ցանցային Պետությունը դարձել է առաջադիմական, կայուն հարթակ, որը միտված է ամբողջ աշխարհում համախմբել համախոհ ուխտավորների հոգևոր, մտավոր և նյութական ռեսուրսները։ Ցանցային Պետության գլխավոր առաքելությունը Հայկական քաղաքակրթության վերածնունդն է որպես հաղորդակցող։

«Հայք»-ի Ցանցային Պետությունը, որպես արդեն իսկ արարող կառույց, իրականացնում է բազմաշերտ գործունեություն՝ ստեղծարար համագործակցության մեջ գտնվելով երեսունից ավել գործընկերների հետ, որոնք ներկայացնում են արարող տարբեր քաղաքակրթություններ։ Իր նպատակային գործունեության շնորհիվ արդեն ձևավորված է ցանցային ամուր կառույց, որն ընդգրկում է Աշխարհի հինգ մայրցամաքների ներկայացուցիչներ։

Իրականացված են բազմաշերտ ու բազմաբնույթ միջոցառումներ, դասախոսություններ, կոնֆերանսներ, որոնց նպատակներից է նաև հնդարիական քաղաքակրթության ամբողջական ճակատի ձևավորումն ու կայացումը։

Այսպիսով՝ «Հայք» քաղաքակրթական սուբյեկտն, իր Ցանցային Պետություն կենտրոնի միջոցով հռչակում է.

✓ Լիարժեք կենսագործել հնդարիական քաղաքակրթության համակարգում՝ ձևավորելու միասնական օրակարգ և ճակատ՝ Արարչակամ արդարության ու ներդաշնակության, խաղաղության ու համերաշխության հաստատման նպատակով։

✓ Լիարժեք կենսագործել աշխարհաշեն հայության ջանքերը միավորելու գործում՝ հայկական ամբողջական համակարգ ձևավորելու նպատակով։

✓ Լիարժեք կենսագործել «Հայք» քաղաքակրթական սուբյեկտի քաղաքական կայացման նպատակով։

Հայքը եղել է ժամանակների սկզբում, կլինի ժամանակների վերջում և դրանից հետո՝ ընդմիշտ ու հավերժ...